

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.
Խաղաղութեան ձայն հնչեցաւ.
Սէր յընդհանուրս սփռեցաւ»:

Ահա, վերստին ծագեց լույսը Քրիստոսի գերեզմանեն, Հարության ավետիսով: Վերստին իջավ մեր սրտերուն՝ առավոտը լուսո: Վերստին պայծառացավ հույսը մեր մեղքերու թողության և մեր հոգիներու փրկության:

Փառք Հարության Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի:

Այս լույս առավոտուն, Սուրբ Էջմիածնի հոգևոր բարձունքեն կհղենք Մեր զատկական ողջույնը Ձեզ, պատմական Աթոռիդ ուխտապահ սպասավորներուն ու հավատացյալ ժողովրդյան, մաղթանքով բարի, որ Սուրբ Հարության շնորհները առատապես բաշխվին ձեր եկեղեցյաց և հավատացյալներուն, ի հոգևոր շինություն նրանց կյանքին:

Մեր ջերմ աղոթքն է նաև, որ Քրիստոսի խաղաղարար հոգին ճառագայթե հորիզոնե հորիզոն համայն աշխարհի ժողովուրդներու վրա, ու մեր օրերուն բազում տագնապներով տառապող մարդկությունը հասնի վերջնական խաղաղության և եղբայրության նավահանգիստը:

Ողջ լերուք և զորացյալ շնորհոք Սուրբ Հարության Տեառն մերո և Փրկչին Հիսուսի Քրիստոսի:

Եղբայրական սիրո ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: